Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 14-ի N 1558-Ն որոշման

ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ, ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2023-2033 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Միջոցառման նպատակը	Ակնկալվող արդյունքը	Կատարողները	Ժամկետը	Ֆինանսավոր-ման աղբյուրը
1.	Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) շրջակա միջավայրի, մարդու առողջության և գյուղատնտեսական նշանակության հողերի վրա վնասակար ազդեցության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացում	ԳՁՕ-ի շրջակա միջավայրի, մարդու առողջության և գյուղատնտեսական նշանակության հողերի վրա վնասակար ազդեցության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակն է, հայտնաբերելով ԳՁՕ-ի և դրանց ածանցյալների բացասական ազդեցությունները, կանխել ԳՁՕ-ի	Շրջակա միջավայրի, մարդու առողջության, գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանության մակարդակի բարձրացում, ինչպես նաև հակազդման մշակված քաղաքականություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն	2023 թվականի 4-րդ եռամսյակից սկսած	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		հնարավոր տարածումը՝ բացառելով անգամ եզակի սերմերի ու տնկանյութի կիրառումը և առավել հետևողական պայքար մղել Հայաստանի Հանրապետությունում ԳՁՕ-ի կիրառման նկատմամբ:				
2.	Կենսաբազմազանության մշտադիտարկում և գնահատում	Կենսաբազմազանության մշտադիտարկման և գնահատման նպատակն է էկոհամակարգում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը և դրանց կանխման ուղղությամբ հնարավոր միջոցառումների իրականացումը:	Շրջակա միջավայրի և կենսաբազմազանու-թյան պահպանության մակարդակի բարձրացում	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2023 թվականի 4-րդ եռամսյակից սկսած	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	Հայաստանի Հանրապետությունում բույսերի գենետիկական բանկերի շարունակական համալրում	Բույսերի գենետիկական բանկերի շարունակական համալրման նպատակն է ապահովել բույսերի գենետիկական	Բույսերի գենետիկական ռեսուրսների առկայություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,	2023 թվականի 4-րդ եռամսյակից սկսած	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		ռեսուրսների պահպանությունը:		ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
4.	Հայաստանի Հանրապետությունում բույսերի սելեկցիայի և սերմնաբուծության զարգացում	Բույսերի սելեկցիայի և սերմնաբուծության զարգացման նպատակն է հանրապետության բնակլիմայական պայմաններին առավել հարմարված, մրցունակ նոր սորտերի բուծման և դրանց սերմերի առկայության շնորհիվ ներկրումից կախվածության նվազումը, տեղական բարձրորակ սորտերի սերմերով ցանքատարածությունների մակերեսների ավելացումը:	Պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, ԳՁՕ պարունակող սերմերի և տնկանյութի պահանջարկի նվազեցում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2023 թվականի 4-րդ եռամսյակից սկսած	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5.	Կենսատեխնոլոգիական ու ագրոնոմիական մասնագիտական կադրերի առկայության ապահովում և լաբորատոր կարողությունների հզորացում	Կենսատեխնոլոգիական ու ագրոնոմիական մասնագիտական (ՀԱԱՀ ագրոնոմիական և ԵՊՀ կենսաբանական կրթական ծրագրեր) կադրերի առկայության ապահովման	Հայաստանի Հանրապետությունում ԳՁՕ-ի լաբորատոր փորձաքննությունների իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,	2023 թվականի 4-րդ եռամսյակից սկսած	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		և լաբորատոր կարողությունների հզորացման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում պատշաճ լաբորատոր փորձաքննությունների իրականացման միջոցով կանխել ԳՁՕ-ների շրջանառությունը և բարձրացնել վերահսկողության մակարդակը:		ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ